

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հանդես Ամսօրեայ», գեկտեմբերի Վիեննայի Մխիթարեան «սուսնաթերթը» վերջին տարին շատ է անհետաքրքրական դարձել ընթերցողների լայն շրջանի համար. նա միանգամայն խրուել է նեղ մասնագիտութեան մէջ և համարեա չէ մտածում այն ընթերցողների մասին, որոնք ոչ հնախօս են, ոչ լեզուաբան, Ձէ՛ կարելի ուրանալ, սր մասնագիտական շրջանում «Հանդէսը» պահպանում է գիտնական լրջութիւն և կարող է նոյնիսկ հեղինակաւոր համարուել. բայց որովհետեւ հայերի մէջ չը կայ մասնագէտների այնքան լայն շրջան, որ կարողանայ պահպանել այսպիսի մի ամսօրեայ հրատարակութիւն, ուստի ցանկալի է, որ «Հանդէսը» վերադառնայ այն ուղղութեան, որ ընդունել էր երկուերեք տարի առաջ, այն է՝ հնարեղածին չափ նիւթ տալ և սովորական ընթերցողներին Ամբողջ համարում, բացի մատենախօսական բաժնից և քաղաքական համառօտ ու այսպիսի հրատարակութեան մէջ անտեղի բաժնից, փոքր ի շատէ ուշադրութիւն է դրաւում պատմական բաժինը, ուր հետաքրքրական տեղեկութիւններ կան հայութիւնից կտրուած և հայութիւնը կորցրած մի հեռաւոր զաւրթի, ծրանսիւլանիայի Եղիսաբեթապօլիս քաղաքի մասին:

«Արարատ», 1900 թ., գեկտեմբերի Այդ համարում շարունակում էին տպուել տեղեկութիւններ թէ՛ հայոց և թէ՛ օտար եկեղեցիների

ընթացիկ կեանքի մասին: Բացի այդ շարունակում էին հետեւել յօդածները. լեզուաբանական—քննադատութիւն Ղարաբաղի Բարբառի՝ Աճառեանի, քննադատական—Հայ ժողովրդական առասպելները Խորենացու պատմութեան մէջ՝ Արեղեանի, և պատմական—Եջմիածնի հայոց մատենադարանից և Դիւանից զանազան նիւթերի տպագրութիւնը: Նոյնպէս շարունակութիւն է և Վերկրագործական անհրաժեշտ գիտելիքներ» յօդածը, որից կարող էին օգտու քաղել մեր գիւղական քահանայները, եթէ այնքան տոգէտ չը լինէին: «Մատենախօսական»-ի մէջ տպուած է Ս. Մ-ի քննադատութիւնը, որի մէջ Եջմիածնական յօդի կարգերը փաստաբանում են և զուրջանք է գործ դրում համոզել ընթերցողին, որ Ա. եպ. Սեդրակեանի «Քահանայական Ինչիր» գիրքը... պարսաւազիր է: Դժուար էր Վանքի հացկատակից ուրիշ վերաբերմունք սպասել: Եջմիածնի պաշտօնական օրդանի այդ տեսակ վերաբերմունքը դէպի մի լուրջ և անկեղծ ցանկութիւն՝ վերանորոգել հինը, ներստածը—ցոյց է տալիս, որ իդուր չէ ստուած. Սեկին սապօնն ի՞նչ է անի, խեղին՝ խորատու:

«Բազմավէպ», 1901, յունուարի Ձէ՛ կարելի չը խոստովանել, որ Վիեննայի Մխիթարեանները աշխատում են իրանց ամսագիրը կենդանի և հետաքրքրական դարձնել: «Բազմավէպը» այլևս բացառապէս հնախօսութեան և բանասիրութեան

նուիրուած մի ժողովածու չէ, ինչպէս էր առաջ. նա վերացրել է իւրանից և «կրօնական» անունը և ձգտում է դառնալ ժամանակակից կեանքին մօտիկ մի հրատարակութիւն: Վերջ աղղը և Բարբը 1800—1900» խմբագրական յօդուածի մէջ խօստւում է անցեալ XIX դարի մասին: Բայց զրոգը շատ թեթեւ է վերաբերուել իր գործին և յօդուածը ներկայացնում է բոլորի ազդեցութեան տակ գրուած մի վիճաբանական տրուում, առանց փաստերի, առանց ծանրակշիռ ուսումնասիրութեան: Երբ նախում են մի ամբողջ դարի պատմութեան՝ զանազան մանր-մունք հանգամանքները, պատահական հոսանքները թողնում են մի կողմ և աշխատում են ընդհանուր ոգին, երկարատե տիրող հանգամանքները բնորոշել: Այս լատիկութիւնները զուրկ է այդ յօդուածը:—Հ. Ալիշանի «Արշալոյս և Արեւելք լատարութեան չափը» աշխատութիւնը, որի մէջ պատմում է քրիստոնէութեան մուտքը Հայաստան, այս համարում էլ չէ վերջանում: Առհասարակ «ճաղմալէսը» մոռանում է իր փոքրիկ ծաւալը և տպագրում է ստուար աշխատութիւններ, փոքրիկ կտորներով. դա մեծ անլարմարութիւն է, որի շնորհիւ ամսագիրը կորցնում է կենսունակութիւնը:—Միևնոյնը պէտք է ասել Հ. Եփրեկեանի «Քննաշխարհիկ Բառարան» անունով գնահատելի և հետաքրքրական աշխատութեան մասին: Մի ամբողջ տարի է այդ բառարանը, որի մէջ նկարագրում են հայաբնակ տեղերը, տպում է «ճաղմալէսի» մէջ, բայց մինչև այժմ միայն Բ տառին է հասցրած: Միթէ Միկիթարեան միաբանութեան համար էլ այժմ անկարելի է դարձել միանգամից տպագրել առանձին գրքով աղբյուրի ստուար աշխատութիւնները:—Թովմէփ վ. Սանտալճեանը դնում է այն սեպածև

արձանագրութեան թարգմանութիւնն ու բացատրութիւնը, որ անցեալ ամառ գտնուել է Եջմիածնում: Բանից դուրս է գալիս, որ դա մի թանկագին զիւտ է, որովհետև ցուց է տալիս, թէ Ուրարտեան թագաւորութիւնը ինչ տարածութիւն ունէր այն ահեղ պատերազմից յետոյ, որ տեղի ունեցաւ Ուրսա թագաւորի և Սաորեստանի Սարգոն թագաւորի մէջ և վերջացաւ Ուրարտուի կատարեալ պարտութեամբ: Նոր գտած արձանագրութիւնը պատկանում է Ուրսա II թագաւորին, որի ուրիշ արձանագրութիւնները գտել է մի քանի տարի առաջ ռուս գիտնական Նիկոլսկի:—«Ժամանակակից պատմութիւն» վերնագրի տակ բերուած է մի կտոր Հ. Նուրիեանի «Ժամանակակից Պատմութիւն» անունով գնահատելի աշխատութեան (XIX դարի պատմութիւն) երրորդ հատորից, որի շուտ հրատարակութիւնը ցանկալի է:—Գ. Վահան Ջարդարեանը մի փոքրիկ յօդուածի մէջ խոստանում է հրատարակել նոյն «ճաղմալէսում» արևմտեան հայերի մէջ XIX դարում լայտնի դարձած բոլոր գործիչների կենսագրութիւնները: Դա էլ մի շատ հետաքրքրական գործ է երևում և մենք կը տեսնենք թէ հեղինակը ինչպէս է կատարում իր խոստումը...

—

«Миръ Божій», ղեկտմարեր ինքնակրթութեան նուիրուած այս գրական և գիտական-ժողովրդական ամսագիրը գնալով մեծացնում է իր ծաւալը և ճշիւացնում բովանդակութիւնը, տալով հազարի քանակութեամբ նիւթ օգտակար ընթերցանութեան համար: Վիպական բաժինը մեծ մասամբ անցեալ համարներից շարունակուող գործերից է կազմուած, այն էլ մեծ մասամբ թարգմանական: Թարգմանական է և գիտական յօդուածների մեծ մասը: Դրանք թէում նշանակենք

«Զիօրդանօ Բրունօ» XVI դարի այս երեկելի գիտնականը մեռաւ ինկվիզիցիայի խարոյկի վրայ այն պատճառով, որ Գալիլէի նման հաստատում էր, թէ երկնային մարմինները առանձին-առանձին աշխարհներ են: Յօդուածը մանրամասն ներկայացրում է մանաւանդ յարազան ինկվիզիցիայի» դատաստանը, այն խալտառակ հանդէսը, որով պապականութիւնը սպանել տուեց այդ մեծ մարդուն և այն սառնասրտութիւնը, որով գիտութեան նահատակ վերաբերում էր մահուան դատովճոխին:—Ամազրի այս համարում վերջացաւ Յիզլէրի «Ճասնիններորդ դարի մտաւոր և հասարակական հոսանքները» անունով աշխատութեան թարգմանութիւնը: Հեղինակը այդ գործի մէջ ի նկատի ունի միայն Գերմանիան և հետեւում է գերմանական մտքի զարգացման դարի սկզբից մինչև վերջը:—Վերջացաւ նաև հոգևոր գիտնական Երեստ Հեկկէլի «Տրանսֆորմիզմ և դարվիշականութիւն» աշխատութեան թարգմանութիւնը:—Մանր յօդուածներից ուշադրութիւն է գրաւում կին-բժիշկ Պելլրովսկանան «Պետրբուրգի բանուորուհին», որի մէջ հետաքրքրական տեղեկութիւններ կան իրանց աշխատանքով ապրող կանանց դրութեան մասին:

—

«ЖИЗНЬ», գեկտեմբերի Ռուսաց ամենահամակրելի ամսագրերից մէկը, հարուստ և հետաքրքրական բովանդակութեամբ. տալիս է և պատկերներու Աշխատակիցների մէջ է և Մաքսիմ Գորկի, տաղանդաւոր վիպագրողը, որ այժմեան ժամանակ ռուս հասարակութեան ամենից շատ սիրած հեղինակներից մէկն է: Այս համարում Գորկիի «Трое» (Երեքը) վէպի շարունակութիւնն է տպուած: Կը խօսենք սրա մասին, երբ կը վերջանայ:—Հէնրիխ Կունովի ձին-

աստանի տնտեսական զարգացումը» յօդուածը (Թարգմանութիւն գերմաներէնից) ծանօթացնում է Երկնային կայսրութեան անցեալ և ներկայ կուլտուրայի հետ: Սխալ է ասել թէ Ձինաստանը ոչինչ առաջադիմութիւն չէ ցոյց տուել մեր օրերում, քարացած է. նախ քան եւրոպացիների խոսումը, Ձինաստանում հիմնուած էին եւրոպական ձեռք գործարաններ. ներկայ խառնակութիւնները տնտեսական նոր պայմանների և մանաւանդ երկաթուղիների առաջ բերած լեզափոխութեան հետեանքներն են: Հեղինակը ապացուցանում է որ եւրոպացիները կամենալով շահագործել Ձինական հողերը և առետրական հրապարակները, ամենեկին նկատի չառան Ձինական կեանքի առանձնատեսակ, ինքնուրույն պալմանները, և տեղի ունեցաւ ընդհարում:—Պրոֆեսոր Ղամբարեանն սկսել է գրել «Պարիզեան նամակներ». այս համարում տպուած է առաջին նամակը, որ ծանօթացնում է Փրանսիական ներկայ կառավարութեան ըրդնած ուղղութեան հետ: Եստաքրքրական կերպով է ներկայացրած Փրանսիայի այժմեան դրութիւնը:—«Ֆերդինանդ Լասսալ» յօդուածի մէջ պ. Սուրկովը խօսում է Լասսալի կատարած դերի, նրա պակասութիւնների մասին:—«Վոսպաշտութիւնը Վեստկալի նահանգի մէջ» յօդուածը բաց է անում Ռուսաստանի հեռաւոր և անծանօթ անկիւններից մէկի պատկերը: Բանից դուրս է գալիս, որ այդ նահանգում բնիկների մի նշանաւոր մասը, 25 հազար հոգի, զեռ իրանց նախկին հեթանոսական կրօնի մէջ են մնացել, իսկ քրիստոնեայ մկրտուածներից շատերը զեռ շարունակում են կապալաւորական զոհեր մատուցանել: Վերջին տաճարամեակում բնիկների (չերեմիա) տնտեսական ծանր դրութիւնը և մանաւանդ 1892

և 1898 սով տարիները շատ նպաստեցին որ հեթանոսութիւնը վերածնուի և ունենայ շատ ֆանատիկոս ներկայացուցիչներ: Ռուս հոգևորականութիւնը միաթոներութիւնն է պահում այդ երկրում, բայց միանգամայն արմատախիլ անել հեթանոսութիւնը դեռ չէ աջողում: Միշտ հետաքրքրական են «Գաւառական պատկերները», որ գրում է ամսագրի իւրաքանչիւր համարում եւզենի Զիրիկովը: Այս անգամ էլ այդ պատկերները, որոնց մէջ գաւառի ցանքն են նկարում, գեղեցիկ տպագրութիւն են թողնում: Միւս յօդուածներէից աւելի է ընկնում հուշակաւոր խաչաքի նկարիչ Լեօնարդօ դա-Վինչիի կենսագրութիւնը, որ կազմել է Պէն և վերջանում է այս համարում:

«Научное Обозрѣніе», գեկտեմբեր: Այս գիտական ամսագրի մէջ տպւում են շատ օգտակար յօդուածներ: Ներկայ համարում տպուածներէից լիշատակները. «Միկրոբիոլոգիան նշանակութիւնը արդիւնաբերութեան մէջ», «Բակտերիաները իբրև հիանդութիւնների պատճառներ», «Նախնական հասարակութիւնը», «Պի դը-Մոպսան և նրա հասարակութիւնը», «Մաքս Միլլէր»: Իբրև յաւելում՝ համարին կցած է մի հետաքրքրական գործ, որ կրում է «XIX դար» վերնագիրը: Դա մի հաւաքական աշխատութիւն է, որի մէջ առանձին յօդուածներով պարզաբանուած են անցած դարի մտաւոր առաջադիմութեան, գիտութեան ճիւղերը և քաղաքական ու կուլտուրական հանգամանքները:

«Кавказскій Вѣстникъ», յունուար: Թիֆլիսում անցեալ տարուանից հրատարակուող այս ամսագրի ներկայ տարուայ առաջին համարը բաական հետաքրքրական բովանդակութիւն ունի: Սկսուած է

Բաֆֆիի «Ենթիւ» թարգմանութեան տպագրութիւնը. պ. Ալ. Խատիսեան քննական-կենսագրական մի յօդուած է տպագրել Բաֆֆիի մասին. ալդտեղ նա մանրամասն խօսում է հայտաղանդաւոր վիպագրողի կեանքի հանգամանքների, գրուածքների մասին, փորձում է որոշել Բաֆֆիի տեղը և նշանակութիւնը մեր դրականութեան մէջ, խոստովանելով որ Բաֆֆիի գրական գործունէութեան լիակատար գնահատման ժամանակը դեռ չէ եկել: Մի առանձին յօդուած էլ նուիրուած է անցեալ տարուայ հայ պարբերական մամուլին:—Մեզ վրայ շատ լաւ տպագրութիւն թողեց Լեվ. Նիպիանի «Հաշտութիւն» ոտանոցը, որի մէջ շատ գեղեցիկ կերպով պատկերացրած է ազգերի եղբայրասպան թըշնամութեան ֆլաւը և գրուած է սրտառուչ հրաւեր որ ազգութիւնները միմեանց եղբայրաթեան ձեռք մեկնեն ու համբուրուեն:—Հետաքրքրական է Լ. Պետրովի ուսումնասիրութիւնը՝ «Սովորողի իրատուք և օրէնք Նովկասում», ինչպէս նաև Ա. Միլլանիի «Վրաստանի և Ռուսաստանի գիւլլօմատիական յարաբերութիւնները XVI և XVII դարերում»:—Մ. Թամաշեանը խօսում է Լասկինի թարգմանած «Բիւզանդիայի Վոնստանդին Ծիրանածին կայսրի հեղինակութիւնները թէ՛մերի և ծոցովրդների մասին». ալդտեղ հետաքրքրական տեղեկութիւններ կան նաև Հայաստանի և հալեբի վերաբերմամբ:—Ձեռք կարող առանց լիշատակութեան թողնել «Ընթերցող» ստորագրութիւն կրող մի նամակ, որ ուղղուած է ամսագրի խմբագրութեան և շօշափում է մի կենսական հարց: Դա այն է, որ Նովկասի պէս մի չբնաղ երկիր շատ քիչ է յայտնի Ռուսաստանին: Անյայտ են մնում մանաւանդ ալդտեղ ապրող աղքերը, մինչդեռ գրանցից երկուսը—հայերը և վրացիները ու-

նեցել են կուտուրական անցեալի
Այդ ազգերի ներկայի մասին ոռւս
հասարակութիւնը ունի այն հասկա-
ցողութիւնները, որոնք գոյութիւն
ունէին դեռ Պուշկինի և Լերմոնտո-
վի ժամանակ. մինչդեռ այդ երկու
բանաստեղծներից չետոյ շատ քուր

է անցել կամուրջի տակով, ճշմա-
րիտ և անկողմնապահ ուսումնասի-
րութիւն կովկասեան ազգերի և
բարբերի—ահա ինչ է ցանկանում
«Էնթերցողը», մի ցանկութիւն, ո-
րին մենք չենք կարող չը միանալ
ամբողջ սրտով...

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	տող	սպուած է	պէտք է լինի
51.	9	ներքերից՝ շտապում էին բարեկե	շտապում էին ժպտալ
66.	11	» ծծուած	լծուած
86.	11	» երկրի	երկսի
166.	1	վերերից՝ ЭПОХЪ	ЭПОСЪ
195.	7	» НАСОСА	НАСОСЫ
198.	12	ներքերից՝ կեանքի, որոնք	կեանքի իւրացման
			և այն մարդիկ, որոնք
200.	10	» որոնց շատերը	որոնցից շատերը